ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի Ս. Խանզադյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզու **(16 դասաժամ), մաթեմատիկա (10 ժամ), կենսաբանություն (2 ժամ), բնություն (4ժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),
2) 1լուսանկար 3x4 չափի,
3) բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
4) անձը հաստատող փաստաթուղթ,
5) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայությանդեպքում),
6) ինքնակենսագրություն (ձև 5),
7) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) ՀՀ արականսեռիքաղաքացիները՝ նաևզինվորականգրքույկ,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
10) որակավորման տարակարգը,կամավոր ատեստավորումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),
11) հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինենելու մասին տեղեկություն.

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի հոկտեմբերի 8-ից մինչև հոկտեմբերի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թ. հոկտեմբերի 23-ին՝ ժամը 13:00-ին, Գորիսի Ս. Խանզադյանի անվան թիվ 6 հիմնական դպրոցում, հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ Գորիս համայն,ք Գետափնյա 1: Տեղեկությունների համար զանգահարել (0284) 2-20-58 կամ (093)604445 հեռախոսահամարներով: